Պատանքդ կարեմ.
Բոյդ հողի տակ դնեմ:
Ջանիդ (մարմնիդ) վրայ քրքրուիս կամ ծակծկուիս.
Սատանի փայ ըլնիս.
Սեզ կապեմ.
Սև լաչիկ (գլխի շոր) գցես գլխիդ.
Տիլէքդ (խնդիրքդ) փորիդ մնայ.
Տունդ քանդուի.
Ցաւ բռնես.
Ցաւ գայ վրադ.
Քոռանաս.
Օջախդ (խրճիթ) կրակ ընկնի.
Օր ու արեդ սև ըլնի.
Օրերդ լացով անցկենան.

Աղջիկներին եւ հարսներին՝

Թագ ու պսակդ սև ըլնի.
Մազդ խուզեմ.
Մարդդ մեռնի.
Ցաւով (երկունքով) մեռնիս.

ԵՐԴՈՒՄՆԵՐ

Աչքս քոռանայ.
Աստուած պէլաս տայ.
Աստծու կրակը թափի վրաս.
Աստուած վկայ, գիտի.
Բերանս բռնուի.
Դժոխքի փայ դառնամ.
Խիզանիս խէրը չտեսնեմ.
Երկու աչքերիս լոյսը քաշուի.
Թագի-պսակի արժանի չըլնեմ.
Լեզուս կապուի.
Խաչը վկայ.
Հէրն ու մէր չտեսնեմ.
Ջուխտ աչքով քոռանամ.
Սուտ ասողին Աստուած թէմամի.
Օրս սևանայ.

Ահա այս է սիրելի Վարդուհի Փէրիայի ընտանեկան